Հավելված 1

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին

ք. _____ ’’_____’’ _____թ.

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը («ՀԿԵ» ՓԲԸ), այսուհետ՝ ենթակառուցվածքի կառավարիչ, ի դեմս «ՀԿԵ» ՓԲԸ տնօրենի, գործող կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ _____, այսուհետ (փոխադրողի լրիվ անվանումը), Փոխադրող, ի դեմս _____ (փոխադրողի լիազորված ներկայացուցչի Ա.Ա.Հ.), գործող _____ (հիմք իրավասություններ՝ կանոնադրություն, լիազորագիր և այլն) հիման վրա, մյուս կողմից, այսուհետ համատեղ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրին համապատասխան, ենթակառուցվածքի կառավարիչը պարտավորվում է Փոխադրողին տրամադրել երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման հասանելիություն (այսուհետ՝ ծառայություններ), ուղևորների, բեռների և ուղեբեռի փոխադրումներ իրականացնելու համար (այսուհետ՝ փոխադրումներ)՝ սույն պայմանագրի պայմաններով, ոչ խտրական հիմունքներով և փոխադրողի հայտերի հիման վրա, իսկ փոխադրողը պարտավորվում է վճարել մատուցվող ծառայությունների դիմաց:

1.2. Սույն պայմանագրի պայմաններով ենթակառուցվածքի կառավարիչը տրամադրում է փոխադրողին հետևյալ ծառայությունները՝

- երկաթուղային ցանցի սահմաններում սպասարկող ենթակառուցվածքի և մատուցվող ծառայությունների (լրացուցիչ ծառայությունների, օժանդակ ծառայությունների) հասանելիություն:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Ենթակառուցվածքի կառավարիչը պարտավորվում է՝

1) ապահովել փոխադրողի երկաթուղային շարժակազմի հասանելիությունը երկաթուղային գծերին՝ ներկայացված հայտին համապատասխան,

2) ծառայություններ մատուցել փոխադրողի գնացքի ընթացքի ժամանակ՝ համաձայնեցված հայտերին համապատասխան,
3) գրավոր տեղեկացնել փոխադրողին համաձայնեցված հայտերի փոփոխություն առաջացնող գնացքների երթևեկության ժամանակացույցում փոփոխությունների վերաբերյալ՝ մինչև նշված փոփոխությունների կատարումը ոչ ուշ քան 10 (տասը) օրացուցային օր առաջ,
4) սույն պայմանագրով ծառայություններ մատուցելիս՝ փոխադրողի կարգավարական ծառայությանը փոխանցել փոխադրողի գնացքի երթևեկության հսկողության, գնացքի երթևեկության ժամանակացույցի կատարման համար անհրաժեշտ, երկաթուղային շարժակազմի երթևեկության և գտնվելու վայրի մասին հավաստի տեղեկատվություն:
2.2. Փոխադրողը պարտավորվում է՝
1) ապահովել երկաթուղային շարժակազմի տեխնիկական շահագործման պահանջները երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրումների կանոններին համապատասխան,
2) ներկայացնել ենթակառուցվածքի կառավարչին երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզիան,
3) ունենալ փոխադրումների իրականացման հետ կապված ռիսկերի գործող ապահովագրություն,
4) «ՀԿԵ» ՓԲԸ որևէ գույքի կամ Կոնցեսիոն ակտիվի կորստի կամ վնասման դեպքում օգտագործել ապահովագրական վճարը՝ վնասված գույքի կամ Կոնցեսիոն ակտիվի փոխարինման կամ վերականգնման համար,
5) ունենալ շարժակազմի՝ տեխնիկական անվտանգության պահանջներին համապատասխանության համապատասխան հավաստագիր,
6) պահպանել հայտում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները,
7) վճարել ծառայությունների դիմաց սույն պայմանագրով նախատեսված չափով և ժամկետներում,
8) հայտնել ենթակառուցվածքի կառավարչին երկաթուղային ենթակառուցվածքի օբյեկտների հայտնաբերված վնասների, ինչպես նաև ենթակառուցվածքի տեխնիկական շահագործման կանոնների խախտումների մասին,
9) ծառայությունների մատուցման ավարտին ենթակառուցվածքի կառավարչին ներկայացնել ճանապարհային ամփոփագիր, գնացքի բնօրինակ թերթի օրինակները և իր կողմից ստորագրված ծառայությունների մատուցման մասին ակտի երկու օրինակ:

3. Հաշվարկների կարգը

3.1. Ենթակառուցվածքի կառավարչի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը և ենթակառուցվածքի կառավարչի ներքին ակտերին համապատասխան սահմանված սակագներից, գանձումներից և վճարներից:
3.2. Սույն պայմանագրի պայմաններով ենթակառուցվածքի կառավարչի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է փոխադրողի կողմից մինչև դրանց մատուցումը 100 տոկոս վճարման տեսքով՝ ենթակառուցվածքի կառավարչի հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

5. Վեճերի լուծումը

5.1. Կողմերի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:
5.2. Այն դեպքում, եթե բանակցությունների միջոցով կողմերը չգան փոխադարձ համաձայնության, բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

6. Անհաղթահարելի ուժի հանգամանքները

6.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով իրենց ցանկացած պարտավորության լրիվ կամ մասնակի չկատարման համար, եթե ապացուցի, որ այդ պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հանդիսացել է անհաղթահարելի ուժի, այսինքն՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ բնական աղետների, ինչպես նաև պատերազմի կամ ռազմական գործողությունների, շրջափակման, իշխանությունների արգելիչ գործողությունների, պետական մարմնի ակտի հետևանք, որի արդյունքում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն դառնում է անհնար, գործադուլների և այլ հանգամանքների հետևանք, որոնք սկսվել են սույն պայմանագիրը կնքելուց հետո:

Եթե այդ հանգամանքներից որևէ մեկն անմիջապես ազդել է սույն պայմանագրով պարտավորությունների կատարման ժամկետների վրա, ապա այդպիսի պարտավորությունների կատարման ժամկետն ավելանում է այն ժամանակով, որի ընթացքում գործել է այդ հանգամանքը:

6.2. Կողմը, որի մոտ սույն պայմանագրի 6.1 կետում նշված հանգամանքների ուժով բացակայում է սույն պայմանագրով պարտավորությունների կատարման հնարավորությունը, պարտավոր է անմիջապես, սակայն ոչ ուշ քան այդ հանգամանքների առաջացման և (կամ) գործողության դադարեցման ամսաթվից 5 օրացուցային օրում տեղեկացնել մյուս կողմին դրանց առաջացման, ենթադրվող տևողության և գործողության դադարեցման մասին, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ծանուցման մեջ պարունակվող անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման և (կամ) գործողության դադարեցման փաստերը պետք է հաստատված լինեն համապատասխան իրավասու մարմնի փաստաթղթով:

6.3. Չծանուցումը կամ ոչ ժամանակին ծանուցումը զրկում է կողմին սույն պայմանահրի 6.1 կետում նշված որևէ հանգամանքի՝ որպես իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար իրեն պատասխանատվությունից ազատող հիմքի վրա հղում կատարելու իրավունքից:

6.4. Սույն պայմանագրի 6.1 կետում նշված հանգամանքների ուժով սույն պայմանագրով իր պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարելու անհնարինության դեպքում, այդպիսի հանգամանքների առաջացման օրվանից սկսած 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում երկու կողմերն իրավունք ունեն պահանջել սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը կամ դրանում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել: Այդ դեպքում, կողմերից ոչ մեկը պարտավոր չէ փոխհատուցել իրական վնասը, իսկ ֆինանսական հաշվարկներն իրականացվում են սույն պայմանագրով փաստացի մատուցված ծառայությունների համար:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7.3. Կողմի գտնվելու վայրի, փոստային հասցեի, հեռախոսի համարի, ֆաքսի, բանկային և այլ վավերապայմանների փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են գրավոր տեղեկացնել միմյանց դրանց փոփոխության ամսաթվից 3 (երեք) օրվա ընթացքում:

7.4. Սույն պայմանագիրը գործում է այն ստորագրելու ամսաթվից մինչև _____թ. ներառյալ:
7.5. Սույն պայմանագրի գործողությունը կարող է երկարաձգվել 1 (մեկ) տարով՝ կողմերի կողմից մինչև պայմանագրի գործողության ավարտի ժամկետը ոչ ուշ քան 15 (տասնհինգ) օր առաջ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա:

8. Կողմերի գտնվելու վայրը, փոստային հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները